01/10.1/2521-09
2009-04-21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Մարգարյանի, Ստեփան Ասլանյանի և Իշխան Խաչատրյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

1. Օրենքի նախագծի 1-ին հոդվածում՝

1) անհրաժեշտ է ճիշտ նշել «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրիվ անվանումը՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ինչպես նաև անհրաժեշտ է «դեկտեմբերի 17-ի» բառերը փոխարինել «նոյեմբերի 20-ի» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որոնց համաձայն օրենքի և Հայաստանի Հանրա-

պետության Ազգային ժողովի որոշման ընդունման օր է համարվում դրա՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վերջնական խմբագրությամբ ընդունվելու օրը.

2) «22[1]» թիվն անհրաժեշտ է փոխարինել «22.1.» թվով՝ համապատասխանեցնելով «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համարակալմանը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին.

3) «ենթակետ» բառը և դրա հոլովաձևերն անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել «կետ» բառով և դրա հոլովաձևերով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները.

4) «սեփականության կամ վարձակալությամբ իրավունքով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ» բառերով.

5) նախատեսվող փոփոխությունն ու լրացումներն անհրաժեշտ է շարադրել առանձին կետերի տեսքով։

2. «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22.1-ին հոդվածի «զ» կետում կատարվող լրացման վերաբերյալ հայտնում ենք, որ ոչ միայն բացառություն պետք է սահմանվի քաղաքացիներին սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ իրենց պատկանող հողատարածքներից բնափայտ մթերելու, այլ նաև հիշյալ անձանց սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ պատկանող հողատարածքներում խոտհունձ կատարելու նկատմամբ, քանի որ օրենքի 22.1-ին հոդվածով արգելվում է նաև վնասել կամ ոչնչացնել բուսականությունը։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում։

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ Ռոմիկ Հարությունյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Նախագիծ
Պ-574-18.03.2009-ՊԱ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-265 «Պետական սահմանի մասին» օրենքի ՀՀ օրենքի 22^1 հոդվածի առաջին մասի «բ» ենթակետից հանել «ձկնորսական պարագաներ» բառերը, իսկ «զ» ենթակետը «ձկնորսությամբ» բառից առաջ լրացնել «արդյունագործական» բառով, իսկ1-ին մասի «զ» ենթակետում «բնափայտի մթերմամբ» բառից հետո լրացնել «բացառությամբ՝ քաղաքացիներին սեփականության կամ վարձակալությամբ իրավունքով պատկանող այգիներում իրականացվող սանիտարական մաքրումների եւ ծառհատումների)» բառերով։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտության

Արմավիրի մարզպետի կողմից ՀՀ Ազգային ժողովի տարածկային կառավարման եվ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահին հասցեագրված երկու գրություններով ներկայացվել է, որ ՀՀ Արմավիրի մարզի մի խումբ բնակիչներ չեն կարողանում կատարել ՀՀ սահմանային շերտում իրենց պատկանող պտղատու այգիների սանիտարական մաքրման աշխատանքներ եւ ծառահատումներ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված սահմանային շերտ մուտք գործող անձանց վրա տարածվող սահմանափակումների պատճառով։ Խնդիրն այն է, որ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 22^1 հոդվածը, արգելելով սահմանային շերտ մուտք գործող անձանց բնափայտի մթերմամբ զբաղվելը, չնախատեսելով դրանից որեւէ

բացառություն։ Բացի այդ, անհիմն է դիտարկվում ոչ առեւտրային նպատակներով իրականացվող ձկնորսության արգելումը։

Սույն օրենքի նախագիծը նպատակ է հետապնդում վերացնել վերոշարադրյալ խնդիրները։

Նշենք նաեւ, որ առաջարկվող նախագծի վերաբերյալ ստացել ենք ՀՀ Պաշտպանության նախարարության եւ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության դրական կարծիքները։